

**ՀԱՍՏԻԿ ՀԱՅԿԻ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Արվեստագիտության թեկնածու, դոցենտ**

**Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ**

**ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն**

E-mail: hasmik.har@mail.ru

Doi. 10.58580/18290019-2022.2.63-17

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաժշավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 2.12.2022 թ., ընդունվել է տպագրությամբ՝ 10.12.2022 թ., ներկայացրել է հեղինակը՝ 20.11.2022 թ.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ 21Ե6Ե197 ծածկագրով, «Հայ աշուղական արվեստը պատմաբնական լույսի տակ» գիտական թեմայի շրջանակներում

## **ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ**

### **Ամփոփում**

Ալեքսանդրապոլի դիմամիկ զարգացող քաղաքային մշակույթի համատեքստում երաժշտությունն առանձնահատող, կենսական դեր է խաղացել: Քաղաքարնակների կյանքը միավորում էր քանակական երաժշտական ստեղծագործության եզակի դրսնորումները և քանավոր ավանդույթի մասնագիտական ստեղծագործության բազմաթիվ ժանրերը՝ սազանդարների և աշուղների ստեղծագործությունները: Նոյն միջավայրը նպաստեց կոմպոզիտորական ստեղծագործության ծաղկմանը: Քաղաքային միջավայրում արագ զարգացան միջմշակութային կապերը, ինչը նպաստեց փոխադարձ հարստացմանը և, որը շատ կարևոր է, քաղաքի համերգային կյանքի ծաղկմանը: Ազանդապահության շնորհիվ Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի բազմաթիվ դրսնորումներ մինչ օրս պահպանում են իրենց կենսական գործառույթները ժամանակակից Գյումրու մշակութային կյանքում:

**Բանալի-քաներ.** Շիրակ, Ալեքսանդրապոլ, երաժշտական կյանք, ժողովրդական երգ, աշուղական արվեստ, կոմպոզիտորական արվեստ, ավանդույթներ:

### **Abstract**

*PhD in Arts, Associate Professor, Director of the Gyumri branch of YSC named after Komitas Hasmik Hayk Harutyunyan. - "Musical Life of Alexandrapol".*

*In the context of dynamic urban culture, Alexandrapol music played a special and vital role. The townspeople's lives are intertwined with unique manifestations of folklore musical creativity and numerous genres of professional creativity of oral tradition, including the works of sazandars and ashugs. The same environment contributed to the flourishing of composer creativity. Intercultural ties developed rapidly in the urban environment, which contributed to mutual enrichment and, most importantly, the flourishing of the city's concert life.*

*Through tradition, many manifestations of the musical life of Alexandrapol retain their vital functions to this day in the cultural life of modern Gyumri.*

**Key Words:** Shirak, Alexandrapol, musical life, folk song, ashug art, composing art, traditions.

### **Абстракт**

*Кандидат искусствоведения, доцент, директор Гюмрийского филиала ЕГК им. Комитаса Асмик Гайковна Арутюнян. - "Музыкальная жизнь Александрополя".*

*В контексте динамично развивающейся городской культуры Александрополя музыка играла особую, жизненно важную роль. В жизни горожан сочетались уникальные проявления фольклорного музыкального творчества и многочисленные жанры профессионального творчества устной традиции - произведения сазандаров и ашугов. Эта же среда способствовала расцвету композиторского творчества. В городской среде бурно развивались межкультурные связи, которые способствовали взаимообогащению и, что очень важно, расцвету концертной жизни города.*

*Благодаря традиционности, многие проявления музыкальной жизни Александрополя сохраняют свои жизненные функции до сих пор в культурной жизни современного Гюмри.*

**Ключевые слова:** Ширак, Александраполь, музыкальная жизнь, народная песня, ашугское искусство, композиторское искусство, традиции.

# ՆՎԻՐՎՈՒՄ Է ՊԿ ԳՅՈՒՄՔՈՒ ՄԱՍՆԱԾՈՒՂԻ

## **Նախարան**

**Ծ**իրակը պատմական Հայաստանի նաև երաժշտական մշակույթի շտեմարաններից մեկն է: Հնագիտական հարուստ նյութը թույլ է տալիս ենթադրել, որ սկսած հայկական ցեղախմբերի ձևավորման ժամանակաշրջանից, այստեղ բյուրեղացել են նաև հայկական մոնողիայի նախնական երգատեսակմերն ու նվազարանային արվեստի իմքնօրինակ ոճը: Շիրակում պեղած ամենահին նվազարանն սպիտակ կրաքարից պատրաստված, Ք. Ծ. ա Վ դարին վերաբերող բազմափող սրինգն է՝ իր ծիսական և կենցաղային գործառույթներով (1. էջ 12): Շիրակում ստեղծված հինագույն ծիսականներերի մեջ տեղ են գտել նաև Շատակեր Շարայի առասպելին առնչվողները:

Ավելի շոշափելի են որվագծվում միջնադարյան Շիրակի երաժշտական ավանդույթները: Վաղ ավատատիրական ինչպես ժողովրդական, այնպես էլ գուսանական երգատեսակմերի, նվազարանային երաժշտության ամենատարբեր դրսուրումների զարգացման շրջանն էր: Այդ զարգացման բարձրակետն Անիի քաղաքային մշակույթն էր: Հայ և օտար պատմիները հիացմունքով են նկարագրել Բագրատունյաց մայրաքաղաքի բազմափոփոխ հանդեսներն ու տունախմբությունները: Դրանց վկան ու մասնակիցն է եղել նաև մեծահամբավ Գրիգոր Մագիստրոս Պահլավոնին, որի բազմաթիվ թղթերում բարացիորեն հնչում են այդ երգերի առանձին պատառիկներ (2.):

Քաղի վիպերգերից՝ այս երաժշտական կենցաղի կարևոր բաղադրամասն են եղել հազներգություն, տաղ և սոինչ կոչվող երգերը, ամենատարբեր պարերգերն ու պարերը և դրանց մեջ նաև՝ հինավորց հոլորկավորության ծեսից պահպանված սղո պարեր: Միջնադարի պատմիներ Արիստուկես Լաստիվերտցին (3.), Հովհաննես Դրասիսանակերտցին (4.), Սամուել Անեցին (5.), Սմբատ Սպարապետը (6.) բազմից են վկայել գուսանական նվազախմբերում հնչած քնարների ու ջնարների, տավիդների ու վիճերի, սրինգների, շնիփորների, ծնծղաների, քաղաքապահ զորքում գործածված ռազմական տարրեր փողերի, թմբուկների և այլ երաժշտական գործիքների մասին:

Անիում՝ հազար ու մեկ եկեղեցիների քաղաքում, մի նոր աստիճանի բարձրացավ նաև հայոց պաշտոնական երգությունը, և ոչ միայն Անիում: Շիրակի Դպրեվանդում էր, որտեղ VII դարում՝ Ներսես Գ կարողիկոսի կարգադրությամբ կազմվեց հայ ինքնուրույն հոգևոր երգերի առաջին ժողովածուն՝ «Ճոճրնտիր»-ը, որում հմտու երաժշտ և երգահան, Շիրակի Դպրեվանդի առաջնորդ Բարսեղ Ճոնն ի մի բերեց և դասդասեց մեծարին այն երգերը, որոնք մինչև այդ տարերայնորեն էին կատարվում և այդ պատճառով երթեմն խառնաշփոր էին առաջացնում պաշտոներգության մեջ: Այդ երգերի հեղինակներից էր նաև նրա նշանավոր ժամանակակիցը՝ Իմաստակ Անանիա Շիրակացին՝ նոյն Դպրեվանդի նախկին սանը: Հոգևոր երաժշտության կենսական ուժի մասին են վկայում նաև հայ պատմիչների կողմից Անիի Տերունական հանդեսների բազմա-

թիվ նկարագրությունները: Այդ հանդեսներում են առաջին անգամ հնչել այնպիսի բարձրարժեք երաժշտական կոթողներ, ինչպիսիք են Պետրոս Գետադարձ կաթողիկոսի, Հովհաննես Սարգավակ Իմաստակ իշխանների շարականներն ու ծորան տաղերը: Պատմական տեղեկություններ կան նաև Դանիել Երաժշտի, Սարգիս Վարդապետ Անեցու մասին (6.):

Հոգևոր բարձրագույն դպրոցներում դասավանդվող հիմնական յոթ գիտություններից մեկը երաժշտությունն էր: Գրիգոր Մագիստրոսի թղթերն ուղղակիորեն ակնարկում են այստեղ սովորողների փայլուն գիտելիքների ու երաժշտական հմտությունների մասին: Անին ոչ միայն զբության կենտրոն էր՝ խազավար մատյանների շտեմարան, այլև հայ հոգևոր երգի մի նոր որակի՝ ծոխագրողության մերելիքներուն հորինվածք կրող ժամերի՝ հոգևոր տաղի ծաղկման նպաստավոր միջավայրերից մեկը: Այդ ազատ ու անկաշկանդ շարադրանքով, կանոնական կաղապար-մեղեղիներից ձերքագատված, վիպական վեհաշունչ կերպարներից ներշնչված տաղերը հետազայտմ մի նոր բարձրակետի հասան Կիլիկան Հայաստանում: Օրինակ՝ այսօր էլ մեծ ժողովրդականություն վայելող Ավագ ուրբաթ օրվա «Տիրամայր» տաղը: Երաժշտագետները համոզված են, որ այս զրուխործոցը նաև որոշակի պատկերացում է տալիս X - XI դդ. աշխարհիկ, գուսանական տաղերի հնչյունային կերպվածքի մասին (7. էջ 94):

Անիի անկումից հետո նրա բնակիչները տարագրվեցին՝ իրենց հոգու մեջ անթեղված տանելով երբեմնի պերճաշուր բաղադրի անմոռանալի երգերը: Մեծ Հայրի Շիրակ աշխարհը կորցրեց իր նշանավոր մայրաքաղաքը և մինչև XIX դ. սպասեց ազգային մշակույթի նոր զարթոնքին՝ իր մեկ այլ քաղաքում, աշխարհաքաղաքական նոր խմբումների հոլովություն: Անիի մերձակայլությունուն կտնվող Կումայրի-Ալեքսանդրապոլում էր դարեր անց ծաղկելու նոր հայկական մշակույթը:

Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթը, որը ձևավորվեց XIX դ. առաջին կեսին, սկզբում հիշեցնում էր բազմագույն մի խճանկար: Բնակիչները գերազանցապես հայեր էին՝ պատերազմական հայտնի իրադարձություններից հետո սկաված արևմտահայերի մեծ ներգաղթով Կարսից, Էրզրումից, Բայազետից, ինչպես նաև՝ Բասենից, Սուլից, Ակաշերտից պատեղ հանգրվանած:

Մի կողմից՝ հայ բազմատար ազգային դիմագծի բացարձակ գերիշխանությունը, մյուս կողմից՝ ազգային փորբամասնությունների ինքնատիպ մշակութային դրսուրումներն ու դրանց փոխհարաբերություններն աստիճանաբար ձևավորեցին մի նոր հայկական քաղաքային ինքնատիպ մշակութային կյանք, որն արդեն XIX դ. վերջին բնութագրվում էր իր կայուն ու ինքնատիպ ավանդույթներով: Աստիճանաբար քաղաքային կենցաղում կայունացավ երգ-երաժշտության բազմաժամակարգ՝ XX դ. սկզբում ձեռք բերելով երաժշտաճական տեղային հատկանիշներ: Ընդհանուր առմանը, Ալեքսանդրապոլի ապրել է հազեցած երաժշտական կյանքով: Այստեղ հասարակական բոլոր խավերն ունեցել են երաժշտագեղագիտական հատուկ պահանջներ, որոնք էլ խթանել են այդ արվեստի զար-

## հիմնադրման 25-ամյա հոբելյանին

գացումը:

Ժողովրդական երգն իր ամենաստարբեր ժամրային դրսնորումներով անշափ սիրած էր քաղաքում։ Արևմտյան Հայաստանից ներգաղթածները, որ երգի խորհ ավանդույթներ կրողներ էին, իրենց կենցաղում պահպանում էին այդ ժամանգործունը։ «Խնուռ գեղի մեջտեղը», «Ես Կոստոն եմ Քայազետցի», «Գնաց աշուն՝ Էկալ զարտն»։ «Քյամբախ Բույանը» երգերն ասվածի լավագույն վկայություններից են (8.)։

Աստիճանաբար այստեղ կայունացավ Կարմ բարձրադիր Գյումրու խոսվածքը, որը եղանակավորվեց քնարական, հայրենասիրական, պատմական, օրորոցային, կատակային, ինչպես նաև ծիսական երգերում։ Ալեքսանդրապոլիցիները հետզհետե ձևավորեցին իրենց երաժշտական նոր միջավայրը, որտեղ ազատ ու անմիջական էին հնչում սիրված մեղեղիները։ «Տոյ-տոյ»-ը, «Տոտիկ»-ը, «Աշուն է եկել մեր մայլենի», «Հեյ, ջան, դափամա»-ն, «Արփաչայի բյանարը»։ Այս և նմանատիպ երգերն անցել են ժամանակային պատճեշը և մինչև այսօր էլ սիրված են Գյումրու կենցաղում։

Այս նոյն միջավայրում հասուն տեղ են գրավել հերոսական, ազգային-հայրենասիրական երգերը, որոնցից էին՝ «Քաջ Արարոյի երգը», «Քայազետցի Կոստոյի երգը», «Էկալ հասակ Վանս ծովուն» (գովեստ՝ ձոնված գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանին), «Զայնը հնչեց Էրզրումն» և այլն (8.)։ Դրանք ժամանակին գրառել և հրատարակել են բանագետ Ա. Մխիթարյանցն ու երաժշտությունից Ա. Բրուտյանը։

Իհարկե, քաղաքային ժողովրդական երաժշտության համապատկեր ներառում է նաև հարևան ժողովուրդների (վրացիներ, թուրքեր, պարսիկներ, արարեներ, ռուսներ), ինչպես նաև հեղինակային, աշուղական, կոմպոզիտորական ամենաստարբեր ստեղծագործությունների կատարումներ։ Սակայն, դրանք իրենց կատարողական-ոճական առանձնահատկություններով հանդերձ՝ կրում էին խիստ որոշակի տեղային՝ ալեքսանդրապոլյան դրոշ։

Ալեքսանդրապոլի ժողովրդական երգ-երաժշտությունը պարարտ հող նախապատրաստեց բանակոր ավանդույթի արոտիստնալ երաժշտության՝ աշուղական ու սազանդարական արվեստի զարգացման համար։ Աշուղները քաղաքի երաժշտական կյանքի անբաժան մասն էին։ Նրանք մշտական մասնակիցներն էին ընտանեկան հավաքույթների՝ խնջուրների, հարսանիքների և այլ հանդիսությունների։ Առավել համբավվոր աշուղներից էին Զահրին, Ղերարին, Բավեն, Հավեսը, Մալովը, Չուլալ-օղլին, Շիրինը։ Նրանց բազմաթիվ երգերը հնչում էին նաև սրճարաններում։ Այստեղ էլ տեղի էին ունենում ավանդական մրցույթները, որոնք երբեմն մի յուրահատուկ ներկայացման էին վերածվում։ Սակայն, պատահում էր, որ աշուղները մրցում էին նաև ինքնարուխ հանգամանքների պայմաններում։ Այսպես, Կ. Կոստանյանը հիշում է աշուղ Խորթը ու նրա մրցակցի աննոռանալի ելույթը, որը տեղի էր ունեցել ձորի տարրեր մասերում զտնվող տների մեջ, և նրանց փոխեփոխ երգեցողությունը լցրել էր զիշերային քաղաքի անդրորոր (9. էջ 219)։ Քաղաքում եղույթներ են ունեցել նաև

շրջիկ աշուղները։ Նրանց հրավիրել են մասնավոր տներ, որտեղ հնչել են աշուղական սիրավեպեր ու հերիարքներ՝ սազի, սանթորի, պարկապուկի նվազակցությամբ։

Ալեքսանդրապոլի հայտնի սրճարաններից մեկը Հովհաննես ու Կարապետ Տալյաններինն էր։ Նրանք Կարսից գաղթած աշուղ Քյամալիի որդիներն էին և շուտով իրենց սրճարանը դարձրին աշուղական համբարձների նշանակոր վայր։ Աստիճանաբար այստեղ են հավաքվում տարածաշրջանում հայտնի աշուղները Մալուլը, Սազային, Զամալին, Ֆիզահին, Ֆահրատը, Պայծառն և այլք։ Շուտով նրանց է միանում նաև աշուղ Զիվանին, որին էլ մոտ երեք տասնյակ աշուղներ շուտով պիտի ընտրեն իրենց համար վարպետաց վարպետություններից պահպանվել է մինչև այսօր։

1880-ական թվականներից Ալեքսանդրապոլում գործող աշուղական համբարության հովանավորը Սուրբ Կարապետն էր։

Ալեքսանդրապոլի աշուղական համբարությունը ի վերջո վերածեց յուրահատով դպրոցի և կատարեց պատմական իր առաքելությունը։ Աշուղական երգարվեստն իր որույն ավանդույթներն ուներ. դրանք ստիպում էին հայ աշուղներին ստեղծագործել գերազանցապես թուրքերն և պարսկերն լեզուներով։ Ալեքսանդրապոլի մշակութային մթնոլորտում, սակայն այդ ավանդույթը փոխակերպվեց։ Արդեն 1850-ականներին աշուղ Շիրինն այստեղ հայերեն երգեր էր հորինում։ Վճռական բայլը, այնուամենանիվ, Զիվանուն էր վերապահված։ Նա բոլոր աշուղներին հորդորում էր հորինել նաև հայերեն երգեր։ Ժամանակակիցները վկայում են, որ այդ գործում Զիվանուն աշակեցել է հայ մեծանուն գրող Դ. Աղայանը, որն այդ տարիներին ուսուցչություն էր անում բաղարում։

Բայց երգերի լեզվական բաղադրիչից, Զիվանին աստիճանաբար ուշադրությունը սևեռեց նաև մեղեղիակերտմանը։ Ավանդական աշուղական մեղեղիները յուրահատով կատարարների դեր էին կատարում։ Օրինակ՝ նրա հանրահայտ «Խելքի աշեցեք»-ը աշուղական մեղեղու դասական մնուշ է։ Մինչդեռ «Ես մի ծառ եմ ծիրանի»-ն ինքնօրինակ եղանակավորում ունի։ Զավակից Ալեքսանդրապոլի եկած Զիվանիկի համար Ալեքսանդրապոլի այն բարեկեր ստեղծագործական ասպարեզն էր, որին և վիճակված էր դառնալ հայ ազգային աշուղական երգարվեստի նորացված դպրոցը՝ քաղաքային երգարվեստի իր բարձր թոփշներով, որոնց յուրահատով բարձրակետն աշուղ Ծերամի երգը եղավ։

«Քավական ժամանակ, - գրում է աշուղն իր ինքնակենսագրության մեջ, - երգում էի պարսկերեն, հետո ժողովլորդի թեկադրությամբ սկսեցի հայերեն երգել և բանաստեղծություններ անել։ Ետո բաղադրային ակումբ ասիական երեկոներ էր լինում, մոտիկ բաղադրից շատերը գալիս էին, որպեսզի Գոգորին լսեն, թե նվազը, թե նրանցից կայսեր էր իր մեղեղային կերտվածքով՝ ուղղակի ներծված քաղաքային ժողովրդական երգերի ողով ու արտահայտչականությամբ։ Այս հատկանիշների շնորհիվ

## ՆՎԻՐՎՈՒՄ Է ՊԿ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱԾՈՒՂԻ

աշուղի երգարվեսարք բարձր զնահատեց նաև մեծն Կոմիտասը և նրան հրավիրեց համդես զալու Գևորգյան ճեմարանի ուսանողների համար:

Ալեքսանդրապոլից աշուղներից շատերը մեծ համբավ էին վայելում Կովկասում: Դա էր նաև պատճառը, որ քաղաք էին զալիս հարևան ժողովորդների մեջ հանրածանաշ աշուղներ, հաճախ՝ ոչ միայն համերգմարդութեառով, այլև երկարատև, փոխագրեցիկ շփումների համար:

Աշուղների մշտական ուղեկիցները նվազածուների խմբերն էին, որոնց նաև սազանարներ էին անվանում: Սրանք պրֆեսիոնալ երաժշտախմբեր էին՝ նվազարանների ավանդական կազմերով և հարուստ նվազացանելով: Ալեքսանդրապոլից սազանարների մասին մանրամասն տեղեկությունները է հաղորդում կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը, որը նաև հիշյալ արվեստի փայլուն գիտակներից էր: Սովորական նվազախմբերը կազմված էին երկու զուտնայից և մեկ դիուլից: Սազից, քամանչայից, սանթորից և դահիրայից կազմված խմբերում նաև երգելու նվազել են միանածայն: Թատից, չոնգուրից, դափից կամ դյումբյուլից կազմված խմբերում երգել է միայն մենակատար երգիչ՝ ընդհատելով դափին զափին զափի:

XIX դարի կեսերից Ալեքսանդրապոլի կենցաղում տոներն ու ծեսերն առանձնահատուկ կարևորություն են ստանում, ընդորում, ոչ միայն արարողակարգն է կանոնացվել, այլև հստակեցվել է ծնի ընթացքում հեռող ամրության երաժշտական նյութը: Այսպես, հանրածանաշ շատ երգեր, պարբերաբար հնչելով տարբեր արարությունների ժամանակ, ծիսականացվել են և ամրակայվելով վերածվել բուն ծիսական երգերի: Օրինակ՝ դժվար է պատկերացնել զյումբեցու որևէ հարսանիք, որի ժամանակ իրքի զովք չի հնչել աշուղ Շերամի «Պարտեզում վարդեր բացված»-ը, կամ Զիվանու «Բեր ծեսրդ համբունեմ, մայրիկ» երգը՝ իրքի հրաժ հրաժեշտի լացերգ: Նշենք նաև ավանդական հարսանապարը, որի համար ալեքսանդրի երաժշտներն ընտրել էին «Ծաղիկը ունի՞ ալա է» հայտնի պարերգը՝ թե զորդիքային և թե երգային կատարման տարբերակներով: Կամ հարսանիքը լուսունին եղրափակող «Առավոտ լուս»-ն: Հետարքրական է, որ քաղաքային միջավայրում սիրված հերիափներից ու այլ ստեղծագործություններից վերցված առանձին կտորներ էլ են եղանակավորվել, մեղեդային հարազատ կերպավորում ստացել ու վերածվելով ծիսական երգերի՝ դարձել հարսանեկան արարողակարգի անբաժան մաս: Նման երգերից հիշատակենք «Ուտիդ տակին վարդեր բացվին» երգը, որի տեքստը վերցված է Դ. Աղայանի «Արեգնական» հերիափից:

Ալեքսանդրապոլից սազանարներն ու զուտնայինները ոչ միայն տեղի ու հարակից զուտերի, այլև Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող ուրիշ շատ քաղաքների տոնախմբություններում պատվավոր և ցանկալի մասնակիցներ էին: Իոլանդացի հայտնի ճամասպարհորդ և հայագետ Հենրի Լինզը 1893 թ. Հայաստան կատարած ճամփորդության մասին իր նորերում գրում է, որ ալեքսանդրապոլից սազանարների

համելի նվազը կարելի է լսել ոչ միայն իրենց քաղաքում, այլև Վաղարշապուտ, Թիֆլիսում և այլուր:

Կատարողական արվեստի ավանդույթները շատ խոր արմատներ ունեցին: Այդ է պատճառը, որ հետագայում էլ ալեքսանդրի երաժշտների հետևողդները հրոշակեցին որպես անկրկնելի կատարողներ, և այսօր էլ նրանց գործը շարունակողներ կան: Նրանք XX դարակարգին հիմնականում համբես էին զալիս «Արևելյան երաժշտների կողեկտիվում»: Հիշատակենք այն երաժիշտներին, որոնք առավել համբավավոր էին: դրույթակարներ՝ Արամ և Մարտին Սնդոյաններ, Կարապետ Եղոյան (ուստա Փանչո), դիուլահար՝ Թաղևոս Հակոբյան (դավուզի կամ դաֆչի թարռու), քառահարցութակահար՝ Արծուն Հովսեփյան, մանդոյինահարցութակահար՝ Արտուր Արարայան, կառնետահար՝ Կարո Չարչողյան, դրույթակարներ՝ Լևոն Մադոյան, Կարո Սնդոյան: Նրանց հետևողդներից էին՝ դրույթակարներ Սերգեյ Սիմոնյանը (Կոնճկել), Մկրտիչ Մալխայանը (վարպետ Մրկըլ), Ժորա Սիմոնյանը (Չախալ Ժորա), Սուրեն Գրիգորյանը (Կիտայ Սուրիկ): Այսօր նրանց շատավիդներ են շարունակում Գագիկ Մալխայանն և Կարապետ Շարոյանը՝ փայլելով ներկային Գյումրու նույնաբան բեղուն ու հարուստ երաժշտական մշակութային համայնապատկերի վրա:

XX դարակարգին Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի համապատկերը լրացնում ու համալրում էին նաև այլ կարևոր գործուներ: Առավել ազդեցիկներից մեկը ուսական մշակութային արժեքների հետ փոխազդեցությունն էր: Անշուշտ, իր պատմաբաղադրական դերակատարությունով, ուսական մշակութային տարրը՝ մյուս արտազգային դրսեորդուների կողքին ուներ առանձնահատուկ շեշտադրություններ, որոնք զալիս էին ոչ միայն այստեղ ուսւների գործունեության բնույթից, այլև այն մշակութային համակարգից, որն էականորեն տարբերվում էր տեղային ասիսկան, մերձավորարևելյան համատեքստից: Հայ-ուսական միջմշակութային առնչակցությունների համայիրում երաժշտությունը փայլուն դրսեորդուների ունեցաւ: Անշուշտ, դրան նպաստող կարևոր գործոնը երաժշտության առավել համբարդականությունն էր, որը մերձեցնում է նույնիսկ հեռավոր մշակություններ կրող հանրություններին (11. էջ 204):

Հայ-ուսական երաժշտական առնչությունների ալեքսանդրապոլյան համապատկերն ընդհանուր ուրվագծերուն այսպիսին էր:

Քաղաքային ժողովրդական, աշուղական և հոգևոր երգ-երաժշտության բոլոր ավանդական դրսեորդուները սրբորեն պահող ու զարգացնող Ալեքսանդրապոլի նախ մուտք գործեցին ուսական զինվորական նվազախմբերը: Դրանց նվազացանում ուսու և արևմտաեվրոպացին կոմպոզիտորների քայլերգեր էին, որոնք կատարվում էին ոչ միայն զորամասերում, այլ նաև քաղաքի փողոցներում, իրավարակներում՝ տարբեր քաղաքային հանդիսականությունների ժամանակ: Աստիճանաբար փողային երաժշտությունն ալեքսանդրից ականջի համար դարձավ ոչ միայն ընդունելի, այլև ցանկալի այն աստիճան, որ ի վերջո քաղաքում ձևավորվեցին սեփական փողային նվազացանուների կատարողական այնպիսի

## հիմնարման 25-ամյա հոբելյանին

ավանդության, որում լավագույն ձևով դրսարքեցին ու զարգացան մանավանդ խորհրդային շրջանում՝ բազմաթիվ ակումբներում, Պիտներների պալատում, ուսումնական հաստատություններում:

Զինվորական նվազախմբերի գեղարվեստական դեկավարներն սկզբնական շրջանում ժամանում էին Ռուսաստանից (Ն. Բորկովիչ, Ս. Պերվոսիհն): Այդ նվազախմբերում հետազոտում սկսեցին ընդգրկվել նաև հայերաժշտություն (մեծմասամբ՝ ինքնուս): Հիշատակենք Սուրեն և Վազգեն Կարապետյաններին, Օնիկ Սաֆարյանին:

1920 թ. Կազաչի պոստի որբանոցում իհմնված փողային նվազախումբը նոր ավանդույթի հիմք դրեց: Մոտ 3 տասնյակ երաժիշտներ ընդգրկող այս նվազախմբի դեկավարը բազմահմտա երաժշտ Նիկոլայ Կուգուտովսկին էր: Ծոտով՝ 1922 թ., նրա դեկավարությամբ ստեղծվեց նաև Պիտներների պալատի փողային նվազախումբը, որի կազմը շատ արագ համարվեց՝ հասնելով շուրջ 150 մարդու: Խսրի նոր դեկավարի՝ ազգությամբ գերմանացի, արոմբռնահար Ի. Բախտերի հմտության ու խմբի կատարողական բարձր հատկանիշների շնորհիվ շատ շուտով նվազախումբը դարձում է քաղաքի նշանակալի իրադարձությունների ու հանդիսությունների, տոնական ու հանգստյան գրոսամենների անփոխարինելի մասնակիցը: Ահա այդ երաժշտությունը մի քանի նվիրական անուն՝ Աշոտ Կարապետյան (Չեփոր), Բարեկեն Սողոյան, Աղասի Չարչողյան (Կյառնես), Գորգեն Չոլախյան (անոնք), Արմենակ Շեղյան (բարիտոն): Նվազախումբը մասնակցել է քաղաքիվ մրցույթների ու փառատոնների, արժանացել բարձրագույն պարզեցների ու դիմունների:

Այսպիսով, փողային նվազախումբն աստիճանաբար դարձավ Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղի կարևոր բաղկացուցիչը: Որպես տիպական օրինակ՝ հիշենք մեծանոն կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի ստեղծագործական գործունեության 25-ամյակի հանդիսության ժամանակ ուսական կայազորի ամենամեծ ու բարձրակարգ նվազախմբի հասուն կելույթ-ողջունը և հանդիսավոր ուղեկցությունը կոմպոզիտորի տնից մինչև հանդիսության սրահ (12. էջ 187):

Սակայն ուսական փողային նվազախմբերի ելույթները միայն ծառայողական գործառույթով չեն սահմանափակվում: Դրանք կարևոր դեր էին կատարում նաև ուսու սպաների ընտանիքների ժամանցային հանգստը կազմակերպելու գործում հատկապես գրոսայզիներում պարբերաբար կազմակերպվող բացօյք համերգներում ժամանակ՝ ճամաշված ուսու երաժշտությունը Անդրեսի և Կողաչենոյի դեկավարությամբ: Այստեղ հնչում էին եվրոպական պարահանդեսային պարեր, սալոնային վալսեր, ինչպես նաև ուսական ժողովրդական երգեր ու ումանաներ: Այս նոր երգացանկը չէր կարող չգրավել տեղացի երաժշտակաների ու նաև վարպետ կատարությունների ուղարկությունը և շատ շուտով արժանի տեղ գրավել սպանդարների ու երգի-աշուղների ելույթներում: Օրինակ «Соловей» և «Старий дρуг» երգերը պարտադիր երգացանկի մեջ էին և սիրված՝ ժողովրդի կողմից: Աստիճանաբար հայկական երաժշտական կենցաղ

ներմուծվեցին նաև ելրոպական պարերը, որոնց ուսուցումը հետազայում հասուն կարևորվեց: Քաղաքային մեկ տասնյակի հասնող սրճարաններն ու ճաշարաններն այս միայն աշուղական մրցույթների հարթակներ չին: Դրանք համերգային ինքնատիպ դահլիճներ էին հիշեցնում: Հայտնի էին հատկապես «Զաշկի չայր» կամ «Երտմի կուրք» (քաղաքային գրոսայզու ճաշարանը), «Դամրջի Ալեքի ճաշարանը» երկաթուղայինների կայարանում:

Հետազայում բազմաթիվ փողային նվազախմբեր կազմակերպվեցին Լենինականի գործարաններին կից մշակույթի տներում, ակումբներում, կրթօջախներում: Քաղաքում փողային նվազախմբային հայուրամյա բարձր մշակույթի ու հզոր ավանդույթների մասին է վկայում նաև այն, որ նույնիսկ 1988 թ. կործանարար երկրաշարժից հետո Գյումրու փողային նվազախմբը կարողացավ բարձրագույն մրցանակի արժանանալ Փարիզում:

Ուսական գործոնը մեծապես նպաստեց նաև Ալեքսանդրապոլի համերգային կյանքի աշխուժացմանը: Տեղացիների հրավերով սկսեցին հյուրախաղերով հանդես գալ կամերային երաժշտուները՝ իհմնականում երգի-երգչուիների: Հետաքրքիրն այն է, որ կատարողների գերակիշությունը մասը հյայզգի ներկայացուցիչներ էին, որոնք կամ ուսանում, կամ էլ բնակվում էին արտասահմանում: Մարզարիս Բարայան, Մարիա Տիգրանյան-Տեր-Մարտիրոսյան, Ներսես Շահամյան, Ելատերինա Կիրիևա-Տիգրանյան և այլք: Վերջինիս համերգի մասին պահպանվել է փորրիկ հուշագրություն, որը ալեքապոլյան համերգային մի երեկոյի գողտրիկ նկարագրություն է: «1886 թ. հուլիս ամսին Պետերուրդից Ալեքսանդրապոլ եկավ երգչուիի Ե. Կիրիևա-Տիգրանյանը և տվեց մի կոնցերտ զինվորական ակումբի ամառային շենքում, «Կրեպոստոյ սադ» անվանված պարտեզում: Երգչուին ստացել է երաժշտական լուրջ կրթություն և ուներ խիստ անուշ և հուզող ձայն. նա կողորսուր ստպան է: Կոնցերտում երգեց մի քանի արիաներ «Ռիգոլետո» և «Տրավիհատա» օպերաներից: Երգեց նաև և այն ժամանակներում շատ տարածված և ուս հասարակության կողմից սիրված հայկական «Վայ, ինչ անուշ» և «Ծիծեռնակ» երգերը: Հասարակության մեծամասնությունը երաժշտական ուսուներ էին, կային նաև բավական թվով հյայեր, որոնք և արժանավորապես զնահատեցին շնորհալի հայ երգչուին: ...Եվ ահա այս տեսակ ...համերգներն էին, որ մեզ ծանոթացնում էին եվրոպական երաժշտությանը, մեր հոգու առջև բաց էին անում այդ հոգեզմայլ երաժշտական զաղանիքները և ծառայում էին որպես հաջորդական էտապներ՝ մեզ դեպի «Պատճանակի զագարը տանող ճանապարհի վրա», - գրում է ժամանակակիցը՝ Պետրոս Մոճոյանը (12. էջ 195):

Նմանատիպ բազմաթիվ հուշագրություններում կարևորվում են մի կողմից այդ համերգներում ներկայացված ելրոպական դասական երաժշտական նկատմամբ ավանդապահ քաղաքի երաժշտական հանրության իրական ջերմ վերաբերունքը, մյուս կողմից՝ քաղաքի ուսու հասարակության կողմից հայ երաժշտու-

## ՆՎԻՐՎՈՒՄ Է ՊԿ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱԾՈՒՂԻ

թյան հանդեպ ցուցաբերած անկեղծ համակրանքն ու հետաքրքրությունը:

Մշակութային երկխոսության վառ դրսնորումներից մեկն էլ 1892 թ. հունվարի 1-ին «Հօգուս Ռուսաստանի սովորական» բարեգործական համերգն էր, որին մասնակցել են քաղաքում հայտնի երաժիշտ-կատարողներ՝ Նիկողայոս Տիգրանյանը, Գրիգոր Տալյանը, Համբարձում Աղամյանը, Պարույր Բարայանը, Ներսես Տեր-Վարդանյանը, օրիորդներ՝ Աղամյանն ու Հայրումյանը: Նրանց միացել են նաև ուս երաժիշտներ՝ երգչուի Գայինա Գորևան և ֆլեյտահար Գ. Աֆանասևը: Վերջինն կատարել է ուսական ժողովրդական երգեր, իսկ երգչուին՝ ուս հասարակության մեջ տարածված ու սիրված «Ծիծեռնակ» և «Կիլիկիա» երգերը: Կարևորելով համերգի նպատակը՝ ժամանակակիցը գրել է. «Այս համերգի վրա մենք առանձնապես կանգ առանք նրա համար, որ ցույց տված լինենք, թե մեր փոքրիկ Ակերանդրապուն էլ իր լուման է նվիրել անդրանիկ եղբորը՝ մեծ Ռուսաստանին, նրա սովի ու թշվառության օրերին: Իսկ այսպիսի բարեգործական նպատակներով մեզ մոտ անդիվ ներկայացումներ ու համերգներ են կազմակերպվել մի շաբթ տարիների ընթացքում» (12. էջ 197):

Անդրադառնապով տեղի կատարողական արվեստին և քաղաքային համերգային կյանքին՝ նշենք, որ շրջադարձային նշանակություն ունեցավ 1891 թ. Քրիստուֆոր Կարա-Մուրզայի այցելությունն Ակերսանդրապուն: Այդ նա էր, որ առաջին անգամ տեղի ուժերով 50 հոգուց կազմված երգչախումբ ստեղծեց, և Ակերսանդրապուն առաջին անգամ հնչեց բազմաձայն խմբերգային երաժշտություն: Այս իրադարձությունը նմանատիպ համերգների անցկացման և քաղաքային երաժշտական կյանքում իր արժանի տեղը գրավելու նախադեպ հանդիսացավ: Արդեն 1892 թ. հունվարի 8-ին դպիր Բրյուս վարժապետը (Արշակ Բրուտյան) կազմակերպում է մի նոր համերգ, որին մասնակցում էին նաև կոմպոզիտոր Ն. Տիգրանյանը, քաղաքի ճանաչված սապանարներ, ինչպես նաև երգեցիկ խոսք խումբը՝ նրա խմբապետությամբ: Համերգի մասին տեղի մասնությունը գրեց. «Դա մի նորություն էր Ակերսանդրապուի համար, ուստի ժողովուրդը մի առանձին հետաքրքրությամբ լցրել էր քաղաքին կլուրի դահլիճը» (17.):

Քաղաքի երաժիշտների թվում այդ համերգների մշտական մասնակիցներից էին Պարույր Բարայանը, Հեղինե և Հայկանուշ Բարայանները, աշուղներ՝ Զիվանին ու Շերամը, երգչներ՝ Եփրեմ Գյաղուկյանը, Սամսոն Կարապետյանը: Երաժիշտ-կատարողների այս համաստեղությունը հետագայում համալրվեց նոր անոններով, որոնք երեւմն գենետիկորեն, երբեմն էլ զուտ ավանդականորեն ժառանգեցին ու ասպազյին փոխանցեցին ալեբայլյան երգային-կատարողական արվեստի ճանական սառանձնահատկություններն ու ողին: Այդ թանկ ու նվիրական անոններից են՝ Մարգարիտ Բարայան, Զարուհի Դոլոխանյան (Բարայան), Շարա Տալյան, Արաքսի Գյուղադիան, Շովիկ Ղազարյան, Վաղարշակ Սահակյան, Լուսիկ Քոչյան, Ալեքս Սարգսյան, Սահակ Սահակյան, Ֆլորա Մարտիրոսյան և շատ ուրիշներ:

XX դարասկզբում Ակերսանդրապուն արդեն հայտնի էր որպես նշանավոր երաժիշտների ու համերգային հարուստ կյանքով ապրող քաղաք: Դա չվրիպեց նաև ձայնագրության՝ դեռևս նոր-նոր քայլեր կատարող ելլրուպացի և ուս զործականների ուշադրությունից: 1901-1902 թթ. այստեղ, ֆոնոգրաֆի օգնությամբ ձայնագրություններ են իրականացնում, որոնցից հետագայում թողարկվում են ձայնապահներ: Դրանք աշուղ Զիվանու, Գորորի (Շերամի), ալեբայլցի գումանչիների՝ քաղաքի բանգարաններում այսօր սրբությամբ պահվող բացառիկ արժեքավոր ձայնագրություններ են:

Երաժշտական տարրեր ավանդույթների համարումն Ակերսանդրապում հանգեցրեց մի նոր որակի, այն է՝ կոմպոզիտորական արվեստի ծնունդին: Վերջինիս կարկառուն ներկայացնուիր եղավ մեծամուն կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ Նիկողայոս Տիգրանյանը: Նա քաջատեղյակ էր քաղաքացին երաժշտական կենցաղում հայտնի լավագույն ստեղծագործություններին, արևելյան բանավոր ավանդույթի նվազարանային ժանրերին, ինչպես նաև մուղամարի կատարողական առանձնահատկություններին: Կրույժուն ստանալով Ակստրիայում, ապա շվիելով ուս երաժիշտ կատարողների ու տարրեր գործիչների հետ՝ նա որշեց նախ՝ երաժշտական կրթությունը կատարելագործել Պետերբուրգում, ապա՝ հնեցնել արևելյան մուղամները ելլրուպական նվազարաններով, ելլրուպական կոմպոզիտորական արվեստի համար տերսություն:

Շատ շտառվ կոմպոզիտորը Պետերբուրգում հրատակեց, ապա նաև այնտեղ փայլուն կատարեց իր կողմից բծախնդրորեն գրառված արևելյան պարերն ու դասական մուղամները՝ դաշնամուրային մշակումներով: Բնական է, որ ուսական երաժշտական հասարակայինության մեջ այդ ստեղծագործություններն առաջ բերեցին ոչ միայն մեծ հետաքրքրություն, այլև, որ ամենաշահեկանն էր կոմպոզիտորի համար, բարձր գնահատեցին արևելյան և արևմտյան երաժշտական ավանդույթների մերձեցման նրա ջանքերը: «Տիգրանով դաշնամուրով շատ արտահայտիչ ու մեծ զգացմունքային մերձեցման է վերարտադրում արևելյան մոտիվները, զգացվում է, որ նա լավագույն մերձեցել և լիովին զգում է դրանց յուրահատուկ ողինն», - գրել է այդ օրերի ուսական մամուլը: Հաջորդեցին կոմպոզիտորի՝ ելլրուպական տարրեր երաժշտական գործիչների ու անսամբլների համար մուղամների մշակումները, շարունակվեցին նրա համերգային ելույթները Ակերսանդրապում, Երևանում, Թիֆլիսում ու Ռուսաստանում: Ավելին, նրա ստեղծագործություններն անմիջապես տեղ գտան ժամանակի նշանավոր կատարողների երկացնելուն: Կոմպոզիտորի խորհրդային տարիների կենսագրությունը կավեց իհմնականում Լենինգրադի հետ, որտեղ նրան ջերմորեն ընդունում և բարձր էին զնահատում հայ և ուս երաժշտներն ու արվեստագետները:

Ակերսանդրապուի ազգային պրոֆեսիոնալ երաժշտության նոր բարձրակետն եղավ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի ստեղծագործությունը: «Առաջին հայկա-

## հիմնադրման 25-ամյա հոբելյանին

կան օպերան ատերծելու գարափարը գրավել է ինձ դեռ պատանեկության տարիներին, երբ աշակերտում էի Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում: Երկար տարիներ եմ կրել այս միտքն իմ հոգում և շարունակ անհանգստությամբ մտածել այն մասին, թե ինչպես պետք է լինի հայկական օպերան, ինչ այսին և ինչպիսի դրամատուրգիական կառուցվածք է ունենալու ... Իսկ երաժշտության բնույթը, իսկ նվազախումը: Ինձ համար մի բան պարզ էր, որ հայկական օպերան չպետք է կրկնի եվրոպականը, պետք է լինի ինքնատիպ, ազգային, ժողովրդին հասկանալի և սիրվի նրա կողմից, - իշխում է կոմպոզիտորը, - Հ. Թումանյանի «Անուշ»-ի թեման ինձ ամրողովին կլանեց: Չստեղով պոեմի գեղարվեստականության մասին, ինը կառուցվածքը, նրա սրանին նախելովանքը, փերկիների վիշտը, սիրահարների անձնվեր սերը, Սարոյի սիրերգը (յուսարացին) և այլն, այս ամենը պահանջում էին հիմնալի պոեմը մարմնավորել երաժշտության մեջ: Տարված այս թեմայով, ես գրեցի օպերան»:

Առաջինը ծնվեց «Աղջի անսատված»-ը: Հետո աստիճանաբար ծնունդ առան մինչև օրս ունինդին խորապես հոգովոր, հոգեպարագ այն երգերն ու եղանակները, որոնց հենքը, անտարակույս, ալերպոլյան նորազգային մելոսն էր: Կատարողների փնտրություն ունանեցին համապատասխան նվազամասերի վերջնական խմբագրումը կոմպոզիտորից տիտանական ջանքեր խլեցին: Ի վերջո, թիֆլիսյան կատարողական ուժերի հետ համատեղ, 1912 թ. օգոստոսի 4-ին, Ալեքսանդրապոլի քաղաքային բեմերը: Այսօր առաջին դերակատարներին իշխում են որպես թանկ ու նվիրական անոններ. Անուշ՝ Աստիլիկ Մարիկյան, Սարո՞ Շարա Տալյան, Սոսի՞ Վարդան Մարտիրոսյան, Անուշի մայրը՝ Արևիկա Տալյան (աշուղ Շերամի աղջիկը): Լեփ-Եցուն դահլիճում հավաքված հանդիսականների հուշերում անջնջելի են մնացել առաջին տպակորությունները՝ շաղախված անմոռաց մեղեդիներով: Հետո «Անուշ»-ը բեմադրվեց Կարսում, Գիլիջանում, Երևանում, Բարձում, սակայն ալերպոլյան բեմելը դարձավ հայ մշակույթի պատմական իրադարձություններից մեկը՝ հետազոտմ մեծ քարձունքներ նվաճած հայ ազգային օպերային արվեստի առաջին մարզարիտը:

Կոմպոզիտորական արվեստի հետագա զարգացումը քաղաքում կայացավ խորհրդային մշակույթի տարիներին: XX դարասկզբին այստեղ ստեղծագործեցին Ն. Տիգրանյանը, Դ. Ղազարյանը, Ա. Տեր-Ղևոնյանը, Ա. Այվազյանը, Մ. Մազմանյանը, Վ. Ուստիսյանը, Ե. Սահառունին, Վ. Բալյանը: Սակայն, ամենատեսականն ու բեղունը կոմպոզիտոր Ազատ Շիշյանի գործունեությունն էր: Նա ոչ միայն բազմաժամկետ կոմպոզիտոր էր, այլև նվիրյալ երաժշտահասարակական գործիչ, վաստակաշտ մանկավարժ: Ակզրում նա երաժշտական ստեղծագործություններ հեղինակեց քատերական սիմֆոնիկ, կամերային բազմաթիվ ստեղծագործությունների հորինմանը: Մինչև 1988-ի չարարատիկ երկարաժամկետ այդ վեհ ու զգայուն արվեստագետը գրիչը վայր չորեց, շարունակեց իր անգնահատելի ման-

կավարժական գործունեությունը: Եվ այսօր նրա բոլոր ուսանողները՝ թե՝ աշխարհահոչակ և թե՝ պակաս հայտնի, հպարտության խորը զգացումով են խոսում կոմպոզիտորական արվեստում կայացման ճանապարհին Ազատ Շիշյանից ստացած անդրանիկ զիտելիքների անուրանալի դերի մասին: Հիշենք կոմպոզիտորի նվիրյալ աշակերտներին՝ Տիգրան Մանսուրյան, Մարտիրոս Բարյանիյան, Երվանդ Երկանյան, Անդրանիկ Ներսիսյան, Աշոտ Մինասյան, Տիգրան Դուկայան, Հայկուի Հակոբյան, Արմեն Հարությունյան և շատ ուրիշներ (14.):

### **Եզրականգում**

XX դարասկզբին Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքում եվրոպական պրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթների հիմքի վրա սկիզբ առավ հայ երաժշտության մի նոր մայրուղի, որը խորհրդային տարիներին է ավելի զորեղացավ Լենինականի երաժշտական կենսագրության մեջ: Ալեքսանդրապոլում ստեղծվեց այն պարարտ հողը, որտեղ մերձեցան լիովին տարրեր երաժշտական-կատարողական կերտվածքներ ու ավանդույթներ: Քաղաքային նպաստավոր միջավայրում հայ և ուսու մշակույթները խաչվեցին՝ տեղի տաղով միջմշակութային արժեքների այն բարերեր կուտակումին, որից սերում է նորը: Այս առումով Ալեքսանդրապոլը մշակույթների փոխանաշման ու փոխհարատացման դասական օրինակ է:

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. *Ter-Martirosos Փ.*, Կամենայա շվիրը Պահ ու քառական, Հերաժշտական Հայաստան», թիվ 2, Եր., 1904 թ.:
2. *Գրիգոր Մագիստրոս*, Թթեր, բնագիրն առաջարանով և ծանրագրայիններով, խմբագիր Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլի, 1910 թ.:
3. *Պատմութիւն Արխատակեսայ վարդապետի Լաստիվերցոյ*, Թիֆլիս, 1912 թ.:
4. *Ցնհանման կարողութուի Դրասիսամակերտցոյ*, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912 թ.:
5. *Սամոլի Անեցի, Հավաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ*, 1893 թ.:
6. *Տարեգիրը արարական Սմբատայ Սպարապետի Հայոց, Փարիզ*, 1859 թ.: *Ստեփանյան Հ., Ավիինյան Հ., Երաժշտություններ միջնադարյան Անիում, ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*, հ. 1, Գյումրի, 1998 թ., էջ 137:  
Հարությունյան Հ., Անիի հանդեսներում կատարվող հազմերգործությունները, «Ծիրակի պատմամշակութային ժառանգություններ» (այսուհետ՝ «ԾՊՄԺ») VII գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007 թ., էջ 208:
7. *Թահմիզյան Ն. Կ.*, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V - XV դդ., Եր., 1985 թ.:
8. *Բրոտյան Ա.*, «Ռամկական մրմունչներ», Եր., 1985 թ.:
9. *Հարույան Մ.*, Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթները Կ. Կոստանյանի «Ինչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հուշագրությունում, ԾՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007 թ.:
10. *Շերամ, Խնճնակենսագրություն*, Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ «ԳԱԹ»), Ծերամի ֆոնդ, N 21:
11. Այս մասին ավելի հանգամանորեն անդրադառներ՝ «Ալեքսանդրապոլը հայ-ռուսական մշակույթային կայացման ժամանակական գործադրություններ» հովանական, «Հայ-ռուսական մշակութային կապեր» միջազգային գիտադրությունի նյութեր, Գյումրի, 2008 թ., էջ 204:

## ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍԻՆԱԾՆԻՂԻ

12. *Մոնղոլան Պ.*, Գեղարվեստի զարգացման պատմությունը (ձեռագիր, Լեմինական, 1937), ԳԱԹ, Պ. Մոնղոլանի ֆոնդ, էջ 187:
  13. «Նոր դար», 1892 թ., Ն 9:
  14. *Ստեփանյան Հ.*, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները վկայում են, //Երաժշտական Հայաստան, #1 (12) 2004, Եր., ԵՊԿ հրատ., էջ 21-23:
- Ter-Martirosov F.*, Pan's stone pipe/Pandean Pipes of the 5th century BC from Draskhanakert, //Musical Armenia N 2 2004, Yerevan. *Grigor Magistros*, Papers, original text with preface and notes, editor K. Kostanyants, Alexandrapol, 1910.
- The Story of Aristakes Vardapet Lastivertsi, Tiflis, 1912.
- Catholicos Hovhannu Draskhanakerttsi*, History of Armenians, Tiflis, 1912.
- Samuel Anetsi*, Collection of Historians' Writings, Vagharshapat, 1893.
- Yearbook of the Armenians of the late Smbat the Constable, Paris, 1859.
- Stepanyan H.*, *Apinyan H.*, Music in Medieval Ani, "Scientific Works" of the Shirak Center of Armenian Studies, vol. 1, Gyumri, 1998, 137 pages. *Harutyunyan H.*, Cantos performed in the Journals of Ani, Proceedings of the VII scientific session "Historical and Cultural Heritage of Shirak" (herein after, HCHS), 2007, p. 208.
- Tahmizyan N. K.*, Grigor Narekatsi and Armenian Music of V-XV Centuries, Yerevan, 1985.
- Brutyan A.*, Labourers' Murmurs, Yerevan, 1985.
- Haroyan M.*, Musical Traditions of Alexandrapol in K. Kostanyan's memoir "What Songs we Used to Listen to in Childhood", Proceedings of the 7th Republican Scientific Session of HCHS, Gyumri, 2007.
- Sheram*, Autobiography, Ye. Charents Literature and Art Museum (hereinafter LAM), Sheram fund, N 21.
- This was referred to in more detail in the article "Alexandrapol in the Crossroads of Armenian-Russian Cultures", Proceedings of the International Conference "Armenian-Russian Cultural Relations", Gyumri, 2008, p. 204.
- Motchoryan P.*, The History of the Development of Fine Art (manuscript, Leninakan, 1937), LAM, P. Motchoryan fund, p. 187.
- //Nor Dar/New Century, 1892, No. 9.
- Stepanyan H.*, Memorials of Armenian manuscripts testify, //Musical Armenia, #1 (12) 2004, Yer., YSC ed., pp. 21-23.

## **REFERENCES**

1. *Ter-Martirosov F.*, Kamennaya svirel' Pana V veka do R.Ch. iz Draskhanakerta, //Muzykaal'naya Armenia N 2 2004, Yer.
2. *Grigor Magistros*, Tghter, bnagirn arajabanov ev tsanotagruthyunnerov, khmbagir K. Kostanyants, Alexandrapol, 1910 th.
3. Patmuthiyiwn Aristakesay vardapeti Lastivertzoy, Tiflis, 1912 th.
4. *Hovhannu cathoghikosi Draskhanakerttsoy*, Patmuthyun Hayotz, Tiflis, 1912 th.
5. *Samuel Anetsi*, CHavaqumn i grotz patmagratz, Vagharshapat, 1893 th.
6. Taregirq arareal Smbatay Sparapeti Hayotz, Phariz, 1859 th. *Stepanyan H.*, *Apinyan H.*, Erazhshtuthyun' mijnadaryan Anium, ShHH kentroni "Gitakan ashkhatuthunneri" h.1, Gyumri, 1998 th., ejj 137. *Harutyunyan H.*, Anii handesnerum katarvogh hagnerguthyunneri', "Shiraki patmamshakuthayin zharranguthyun'" (aysuhet: ShPMZh), VII gitakan nstashrjani nyuther, Gyumri, 2007 th., ejj 208.
7. *Tahmizyan N.*, Grigor Narekatzin ev hay yerazhshtuthyun' V-XV dd., Yer., 1985 th.
8. *Brutyan A.*, Ramkakan Mrmunjner, Yer., 1985 th.
9. *Haroyan M.*, Alexandrapoli yerazhshtakan avanduythner' K. Kostanyani "Inch erger ejinq lsum mer mankuthyan orerum" hushagruthyunum, ShPMZh hanrapetakan VII gitakan nstashrjani nyuther, Gyumri, 2007 th.
10. *Sheram*, AInqnakensagruthyun, Ye. Charentzi anvan Grakanuthyan ev arvesti thangaran (aysuhet GATH), Sherami fund, N 21.
11. Ays masin aveli hangamanoren andradardhzel enq "Alexandrapol' hay-rusakan mshakuythnri khachmeruk" hodvatsum, /hay-rusakan mshakuthayin kaper, mijazgayin gitazhoghovi nyuther, Gyumri, 2008 th.ejj 204.
12. *Motchoryan P.*, Gegharvesti zargatzman patmuthyun' (dzheragir, Leninakan, 1937), GATH, P. Motchoryan fund, ejj 187.
13. //Nor Dar, 1892, No. 9.
14. *Stepanyan H.*, Hayeren dzheragreri hishatakaraner' vkayum en., //Erazhshtakan Hayastan # 1(12) 2004., Yer.: EPK hrat., ejj 21-23.

**Հեղինակի մասին տես էջ 16:**  
**About the author, go to 16.**  
**Об авторе, см. С. 16.**